Արարողությանը ներկա էին Հայաստանում եւ Վրաստանում Պապական նվիրակ Մարեկ արքեպիսկոպոս Սոլչինսկին, Հայաստանում, Վրաստանում եւ Արեւելյան Եւրոպայում Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Ռաֆայել արքեպիսկոպոս Մինասյանը, ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Սերգեյ Մանասարյանը, ՀՀ-ում Եգիպտոսի եւ Լիբանանի դեսպանությունների ներկայացուցիչներ:

Արարողության սկզբում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ երջանկահիշատակ Շենուդա Պատրիարքի անձին եւ պասնամյակների բեղուն հովվապետական գործունեությանը: «Նրա ջանքերի եւ նվիրյալ աշխատանքի շնորհիվ Ղպտի Ուղղափառ Եկեղեցին նոր վերածնունդ ապրեց եկեղեցիների, նոր թեմերի, ծխերի, կրթական եւ բարեսիրական հաստատությունների հիմնադրմամբ: Նրա գահակալության շրջանը հատկապես նշանավորվեց անապատական հայրերի վանական հին ավանդության վերածննդով», - ասաց Նորին Սրբությունը:

Խոսելով Հայաստանում եւ Եգիպտոսում Ղպտի Պատրիարքի հետ ունեցած իր հանդիպումների մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց. «Հանգուցյալ Հայրապետը, որպես Հայ Եկեղեցու եւ ժողովրդի բարեկամ, իր եղբայրական այցերով պատվել է Հայոց հայրապետներին: Մենք աղոթքով ենք հիշում 2002 թ. Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կատարած իր եղբայրական այցը, երբ միասնաբար աղոթք վերառաքեցինք Միածնաէջ Սուրբ տաճարում, Ծիծեռնակաբերդում հարգեցինք հիշատակը Հայոց Ցեղասպանության նահատակաց, պատգամներ եւ օրհնություններ փոխանցեցինք մեր Եկեղեցու զավակներին եւ ապագա հոգեւորականներին»:

Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ հանգուցյալ Պապի՝ որպես քրիստոնեական միասնության եւ միջկրոնական համերաշխության ջատագովի նշանակալից ներդրումը միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններում, գործուն մասնակցությունը Էկումենիկ երկխոսություններում:

Վերջում Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն Հոգեւոր Խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անունից վերստին ցավակցություն հայտնեց Ղպտի Ուղղափառ Եկեղեցուն եւ Եգիպտոսի իշխանություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ»-Ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մարտի 28-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Վորլդ Վիժն» կազմակերպության Միջին Արեւելքի եւ Արեւմտյան Եւրոպայի տարածաշրջանային ղեկավար Կոնին Լեններբերգին եւ Տարածաշրջանային գործառնությունների ղեկավար Դերք Բուին:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց քրիստոնեական կազմակերպությանը եկեղեցիներին ցուցաբերվող զորակցության եւ օգտաշատ ծառայութ-

յունների համար: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և «Վորլդ Վիժն»-ի միջև մեկ տասնամյակից ավելի պատմություն ունեցող համագործակցությանը և արձանագրված հաջողություններին: Նորին Սրբությունը մասնավոր գոհունակություն հայտնեց, որ Հայ Եկեղեցու տարբեր կառույցների և «Վորլդ Վիժն»-ի համատեղ աշխատանքները հատկապես ուղղված են մանուկների քրիստոնեական դաստիարակությանը:

«Վորլդ Վիժն»-ի ներկայացուցիչները, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար, ընդգծեցին, որ Հայոց Եկեղեցին կարևոր գործընկեր է կազմակերպության առաքելության իրականացման գործում: «Վորլդ Վիժն»-ի պատասխանատուները ներկայացրեցին Հայաստան այցի իրենց դրական տպավորությունները, անդրադարձան երիտասարդների համար իրականացվող աշխատանքների կարևորությանը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաև երիտասարդության առջև ծառացած մարտահրավերների և մանուկների կրթության ու դաստիարակության խնդիրների մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐԳԱՀԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելիներ,

Աղոթական զգացումներով հավաքվել ենք քաղաքամայր Երևանի Սուրբ Հովհաննես եկեղեցում՝ հրաժեշտ տալու անվանի երգահան, դաշնակահար, մեր ժողովրդի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ, ի Տեր հանգուցյալ Ալեքսանդր Հարությունյանին:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ Մեր սրտակցությունն ու վշտակցությունն ենք բերում հանգուցյալի այրուն՝ տիկին Իրինային, զավակներին, ընտանիքի հարազատներին և բոլոր սգացյալներին:

Ջերմությամբ ենք անդրադառնում ննջեցյալի կյանքին ու գործունեությանը, որը լուսավոր հետագիծ է թողել հայ մշակույթի ու արվեստի երկնակամարում և մշտավառ հիշողություն՝ հայորդյաց սրտերում: Լուսահոգի Ալեքսանդր Հարությունյանը իր բարձրարվեստ ստեղծագործություններով արժանացել է երաժշտասեր լայն հասարակության մեծ սիրուն և հիացմունքին: Նրա երաժշտական գործերը յուրահատուկ մեղեդայնությամբ ու ներդաշնակությամբ արտահայտում են մեր ժողովրդի առ Հայրենին սերը, վեհ զգացումներն ու ներաշխարհի հույզերը: Բարեհիշատակ Ալեքսանդր Հարությունյանի բազմաժանր և ինքնատիպ ստեղծագործությունները ջերմ արձագանք են գտել նաև աշխարհի տարբեր երկրներում: Գովարժան են հանգուցյալի վաստակն ու ձեռքբերումները մանկավարժութ-